ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 13 – Ա **23 հունվարի 2018 թ.**

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ 26 - ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ <<ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ՁՄԵՌ – 2018>> ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.19-րդ կետերի պահանջներով

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայկական բանակի 26-րդ տարեդարձին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում <<Գեղարքունյաց ձմեռ – 2018>> մարզամշակութային միջոցառման կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի.

2) Հայկական բանակի 26-րդ տարեդարձին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում անցկացվող <<Գեղարքունյաց ձմեռ - 2018>> մարզամշակութային միջոցառման անցկացման կանոնակարգը՝ համաձայն N2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Անուշ Պողոսյանին՝ միջոցառումների օրերին ապահովել մասնակիցների առաջին բժշկական օգնությունը:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ

Հավելված N1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2018 թվականի հունվարի 23-ի
N 13-Ա որոշման

Կազմ
Հայկական բանակի 26-րդ տարեդարձին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում <<Գեղարքունյաց ձմեռ – 2018 >> մարզամշակութային միջոցառման կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի

Բաղալյան Գարիկ – ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/
Հարությունյան Վանիկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
Պողոսյան Անուշ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Չարվադարյան Գեղամ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ
Սաֆարյան Համբարձում - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ
Շահբազյան Հասմիկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ
Դաղոյան Վարդինե - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավո մասնագետ
Գևորգյան Գևորգ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավո մասնագետ
Թիզյան Հակոբ - ՀՀ Գեղարքունիք մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ
Օհանյան Տիգրան - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ
Առաքելյան Ալեքսան- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ
Մալխասյան Գոհար. - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի կրտսեր մասնագետ
Խլղաթյան Խոսրով - <<Գեղամա աշխարհ>> թերթի գլխավոր խմբագիր /համաձայնությամբ/
Դաշտոյան Գրիգոր - <<Գեղարեգ>> կրթամշակութային հասարակական կազմակերպության նախագահ /համաձայնությամբ/

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2018 թվականի հուվարի 23-ի
N 13-2հ որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ 26-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ <<ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ՁՄԵՌ - 2018>> ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1.ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայկական բանակի 26-րդ տարեդաձին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում <<Գեղարքունյաց ձմեռ-2018>> մազամշակութային միջոցառման (այսուհետ՝ միջոցառում) նպատակն ու խնդիրներն են՝ նպաստել

- ✓ ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներում ձմեռային մարզաձևերի և ազգային խաղերի մասսայականացմանը.
- ✓ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, մարզական կազմակերպությունների կողմից ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ուղղությամբ իրականացվող համագործակցված աշխատանքներին.
- ✓ մարզի ազգաբնակչության առօրյայում առողջ ապրելակերպի արմատավորմանը.
- ✓ հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության դաստիարակության գործին:

2.ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

Միջոցառումն անցկացվում է մարզի համայնքներում՝ 2018 թվականի փետրվարի 5-ից մինչև 25-ը ընկած ժամանակահատվածում:

3. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

✓Մասսայական դահուկավազք /կամ կրոսավազք 500-1000 մետր /

✓Մրցումներ՝ սահնակներով

✓Պարանի ձգում /թիմերով/

✓5կգ, 8 կգ և 16 կգ կշռաքարերի բարձրացում /ազատ ոճով /

✓ Մարզական ցուցադրական ելույթներ,

✓Սպորտային տարաբնույթ խաղեր՝ /մինի ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, շարժական խաղեր, շախմատ, շաշկի, նարդի և այլն/

✓Բարձունքի գրավում

✓Ձնագնդիով / կամ թենիսի գնդակով / հարված նշանակետին

✓Հրաձգություն օդամղիչ հրացանից՝ 10 մետր հեռավորությունից /ազատ ոճով , 5 կրակոց /

✓Գեղարվեստական ինքնագործ համույթների ելույթներ

✓Սպորտլանդիայի անցկացում

✓ Մրցումներ՝ ազգային խաղաձևերից

✓Ազգային կոխ ըմբշամարտի անցկացում երեք քաշային կարգերում / մինչև 40 կգ., 41-50 կգ և 51-60 կգ ./

✓Շուրջպար՝ խարույկի շուրջ

4. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Միջոցառման ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը: Համայնքներում միջոցառումը կազմակերպում է տվյալ համայնքի ղեկավարի աշխատակազմը՝ ուսումնական, մարզական, մշակութային և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ, անցկացնում է համայնքի ղեկավարի կողմից ձևավորված մրցավարական հանձնաժողովը:

5. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ

Միջոցառումը լուսաբանվելու է մարզում գործող զանգվածային լրատվական միջոցներով և տեղադրվելու է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կայքէջում: Միջոցառման ավարտից հետո անհրաժեշտ է մինչև ս/թ փետրվարի 28-ը ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն ներկայացնել միջոցառման վերաբերյալ տեղեկատվություն և տեսանյութեր:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

Միջոցառման կազմակերպման և անցկացման հետ կապված բոլոր ծախսերը /լուսաբանում, հավաստագրեր, պատվոգրեր, հուշանվերներ և այլն/ հոգում են համայնքապետարանները:

7. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

Միջոցառման ընթացքում առանձին մարզաձևերից մրցանակային տեղեր գրաված թիմերին և մարզիկներին հավաստագրերով պարգևատրումը կամ հուշանվերներով խրախուսումն իրականացվում է համայնքի ղեկավարի կողմից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ